

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՁՈՐՈՒԹՅԱՆ (1922 Թ.)

### Ա. Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գյուղացիության «սոցիալ-դասակարգային կառուցվածք» հիմնահարցը բացահայտելու համար անհրաժեշտ է, նախ, պարզել գյուղացիության տնտեսական հզորությունը, այնուհետև՝ յուրաքանչյուր տնտեսական շերտի սոցիալական բովանդակությունը: Ժամանակակից գիտությունը գյուղացիության տնտեսական հզորությունը բացահայտելու արդյունավետ մեթոդներից մեկը համարում է համակարգային վերլուծությունը: Այն նախատեսում է հետազոտությունն սկսել տնտեսական հզորությունը բնութագրող ցուցանիշներից (տարրերից), այնուհետև՝ ենթահամակարգերից, իսկ եզրափակիչ փուլում կատարել տնտեսական հզորությունը բնութագրող էական ցուցանիշների ամբողջության միաժամանակյա համակարգային վերլուծությունը:

Գյուղացիության տնտեսական հզորության մասին մանրամասն տեղեկություններ են պարունակվում զանգվածային վիճակագրական նյութերում: Դրանական արտահայտությամբ դրանք ներկայացված են բյուջետային փաստաթղթերում, իսկ նյութական ու ապրանքային տեսքով՝ գյուղատնտեսական ու հողային համապարփակ կամ այլ կարգի վիճակագրական նյութերում:

Գյուղացիության ներքին կառուցվածքն ըստ տնտեսական հզորության ուսումնասիրելու համար արժեքավոր տվյալներ կան 1922 թ. գյուղատնտեսական ու հողային միակ համապարփակ վիճակագրության նախնական քարտում:

Նշյալ քարտում առկա 288 որակական ու քանակական ցուցանիշների մի մասն ուղղակիորեն, մյուսներն անուղղակիորեն են բնութագրում գյուղացիության տնտեսական հզորությունը: Գյուղացիական տնտեսությունները բնութագրող նախնական քարտի 12 բաժիններում (ենթահամակարգերում) առկա ցուցանիշներից ընտրել ենք 15 էական ցուցանիշներ, որոնք հիմք են համարվել տնտեսությունների բյուջեի ձևավորման համար: Ոչ էական ցուցանիշների ուսումնասիրումը նպատակահարմար չէ ինչպես բյուջեի ձևավորման գործում իրենց փոքր ավանդի, այնպես էլ վերլուծական դժվարությունների առումով: Ելնելով վերոհիշյալից՝ առաջարկում ենք գյուղացիության խմբերն ըստ տնտեսական հզորության վերլուծության ենթարկել՝ հիմք ընդունելով ներքոհիշյալ ցուցանիշները.

անասնապահության ենթահամակարգ	հողագործության ենթահամակարգ	արդյունաբերական բնույթ ունեցող գյուղատնտեսական երկրորդական պարապմունք
<ol style="list-style-type: none"> <li>1. խոշոր եղջերավոր անասուն</li> <li>2. բանող եգ</li> <li>3. բանող գոմեշ</li> <li>4. մանր եղջերավոր անասուն</li> <li>5. ձի</li> <li>6. կով</li> <li>7. փոխադրամիջոց</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. տնամերձ</li> <li>2. բույսերի մշակումը դաշտում (ցանքս)</li> <li>3. ընդամենը հող</li> <li>4. բնական խոտհարք</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. ջրաղաց</li> <li>2. արհեստանոց</li> <li>3. մեղվանոց (փեթակ)</li> <li>4. խանութ</li> </ol>

Հենվելով վերոնշյալ 15 էական ցուցանիշների վրա, կատարել ենք միաժամանակյա համակարգային վերլուծություն՝ սահմանելով գիտականորեն հիմնավորված չափանիշներ, որոնք բնութագրական են 1920-ական թթ. համար: Չափանիշների գիտական հիմնավորումն ու կատարվել է 1922 թ. գյուղատնտեսական ու հողային համապարփակ վիճակագրության հանրագումարային տվյալների հիման վրա, որտեղ տեղեկություններ կան հացահատիկային ու այլ ցանքերի բերքատվության, պարենային ապրանքների գների և այլնի մասին: Դրանք համադրելով ու համարժեքության մոդել կառուցելով՝ հնարավոր դարձավ բացահայտել գյուղացիության տնտեսական հզորության աստիճանը և հստակ որոշել յուրաքանչյուր տնտեսության տեղը տնտեսական հզորություն ունեցող շերտերում: Ատեղծվել է համարժեքության մոդել բալային արտահայտությամբ, վերականգնվել է տնտեսությունների բյուջեն՝ դրամական արտահայտությամբ: Այս կարգի հետազոտության ժամանակ անխուսափելի է դառնում այլ հեղինակների կողմից նախկինում սահմանված չափանիշների վերանայումը, քանի որ հստակ է, թե ինչից է ձևավորվում բալը (15 էական ցուցանիշներից), ի՞նչ արժե մեկ բալը (կամ մեկ դես. ցանքս, կամ մեկ կով և այլն), ի՞նչ կարելի է գնել հետազոտվող տարվա (1922 թ.) ռուբլով և ինչպե՞ս ապրել:

Գյուղացիության տնտեսական շերտերը բնութագրելու և սահմանազատելու համար սահմանվել է հետևյալ բալային ու դրամական ինտերվալը.

**Գյուղացիության տնտեսական շերտերը բնութագրող չափանիշները բալային ու դրամական արտահայտությամբ**

*Աղյուսակ 1*

Ենթաշերտեր	Տնտեսական շերտեր					
	Չքավորներ		Միջակներ		Ունևորներ	
	բալերով	ռուբլով (տարեկան)	բալերով	ռուբլով (տարեկան)	բալերով	ռուբլով (տարեկան)
ստորին	0-0.1	0-8.05	3.1-8	241.6-664	14.1-18	1127.1-1449
միջին	0.2-2	8.06-161	8.1-12	664.1-966	18.1-22	1449.1-1771
վերին	2.1-3	161.1-241.5	12.1-14	966.1-1127	> 22	> 1771

Նախ, տնտեսական հզորությունը բնութագրող գյուղացիական շերտերի մասին: Մենք նպատակահարմար չենք համարում տնտեսությունները թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական առումով միանշանակ երեք շերտերի բաժանելու սկզբունքը: Ավնհայտ է, որ չքավոր են համարվում 0-ից 3 բալ կամ դրան համարժեք ցուցանիշ (օր. հացահատիկային ցանքս), կամ տարեկան բյուջե ունեցող տնտեսությունները: Ավնհայտ է, որ ոչինչ չունեցող, մեկ և երեք բալ ունեցող տնտեսությունների միջև առկա է բալային ու դրամական նկատելի ինտերվալային տարբերություն, որը հաշվի չառնել հնարավոր չէ: Նույնը կարելի է ասել նաև միջակների ու ունևորների վերաբերյալ: Ուրեմն, տարբերակված մոտեցումը ոչ միայն գիտական է, այլև գործնականում անհրաժեշտ: Ելնելով վերոհիշյալից՝ յուրաքանչյուր տնտեսական շերտում առանձնացրել ենք երեք ենթաշերտ:

Եվ այսպես, հստակորեն սահմանազատված են ինչպես տնտեսական հզորությունը բնութագրող ցուցանիշների համախումբը, այնպես էլ ըստ տնտեսական հզորության գյուղացիության շերտերը բնութագրող չափանիշները: Չքավոր են համարվել 0-241,5 ռուբլու տարեկան բյուջե ունեցողները: Մինչև 8 ռուբլու տարեկան վաստակ ունեցողները դասվել են չքավորների ստորին ենթաշերտի, 8,1-ից մինչև 161 ռ. ունեցողները՝ միջին ենթաշերտի, իսկ 161,1 ռ. մինչև 241,5 ռ. ունեցողները՝ վերին ենթաշերտի մեջ: Միջակների բյուջեն տատանվում է 241,6 ռ. մինչև 1227 ռ. սահմանում: Նրանց ստորին ենթաշերտի բյուջեն հասել է մինչև 644 ռ., միջին ենթաշերտինը՝ 966 ռ., իսկ վերին ենթաշերտինը՝ 1127 ռ.: Ունևոր տնտեսությունների բյուջեն սկսվում է 1127 ռուբլուց: Նրանց ստորին ենթաշերտն ավարտվում է 1449 ռ. սահմանագծում, միջին ենթաշերտը՝ 1771 ռ., իսկ վերին ենթաշերտը սկսվում է 1171,1 ռուբլուց:

Հետազոտական առումով նորույթ է ոչ միայն ընտրված մեթոդը (համակարգային վերլուծություն), բազմաթիվ էական ցուցանիշների միաժամանակյա ուսումնասիրումը, չափանիշների սահմանումը, այլև այն մոտեցումը, երբ գյուղացիության տնտեսական հզորությունը

ըն բացահայտվում է բազմակողմանիորեն, կատարվում է բազմաշերտ հետազոտություն: Առաջարկվող մոդելի իմաստն այն է, որ, նախ, բացահայտվում է ողջ գյուղացիության տնտեսական հզորությունն, այնուհետև հետազոտությունը կատարվում է ըստ որակական-քվանտիկային հատկանիշների՝ ամբողջական դարձնելով գյուղացիական տնտեսությունների և նրանց տնտեսական հզորության մասին մեր պատկերացումները: Նման դեպքերում հնարավոր է դառնում բացահայտել տնտեսական խմբերի կենսագործունեության հնարավորությունները, պատճառաբանել ու հիմնավորել նրանց այս կամ այն խմբում հայտնվելը, հետազոտությունը կատարել խորությամբ ու լայնությամբ:

Նախ հետազոտված ողջ գյուղացիության տնտեսական հզորությունը բնութագրող շերտերի մասին (տե՛ս աղյուսակ 2):

**Գյուղացիության ներքին կառուցվածքն ըստ տնտեսական հզորության 1922 թ. (տոկոսներով)**

*Աղյուսակ 2*

Ենթաշերտեր	տնտեսական շերտեր (տոկոսներով)		
	չբավորներ	միջակներ	ուճև որներ
ստորին	16.05	27.64	4.67
միջին	21.66	10.87	3.06
վերին	9.12	2.92	4.01
<b>ընդամենը</b>	<b>46.83</b>	<b>41.43</b>	<b>11.74</b>

Ստացված տվյալները վերաբերում են հետազոտված ամբողջ գյուղացիությանը: Հանդգնում ենք, որ տնտեսությունների մեծ մասը տեղ է զբաղեցրել չբավորների շերտում (46,83 տոկոս): Ավելիայն է, որ դրանք միատեսակ տնտեսական վիճակում չեն գտնվել: Առավել ծանր տնտեսական վիճակում են գտնվել 16,05 տոկոս կազմող տնտեսությունները, որոնք հայտնվել են չբավորների ստորին ենթաշերտում: Նրանք կազմել են գյուղական պրոլետարական զանգվածը. իրենց գոյությունը պահպանել են ոչ թե սեփական արտադրամիջոցների հաշվին, այլ ուրիշների մոտ աշխատելով: Չբավորների խմբում հաստատուն դիրք են գրավել 21,66 տոկոս կազմող տնտեսությունները: Իսկ 9,12 տոկոս կազմող տնտեսությունների վիճակը հաստատուն համարել չի կարելի, քանի որ նրանք միտում ունեն տեղափոխվելու կամ հաստատուն չբավորների, կամ միջակների ստորին ենթաշերտերը:

Միջակները կազմել են ողջ հետազոտված տնտեսությունների 41,43 տոկոսը: Նրանք քանակական ու տոկոսային առումով քիչ են զիջում չբավորներին: Ըստ հետազոտության տրամաբանության և ստացված արդյունքների, նրանց վիճակը նույնպես միանշանակ չի կարելի գնահատել, քանի որ նրանց միջոցների դրամական արտահայտությունը զգալի ինտերվալ ունի (241,6-1127 ռուբլի): Անկայուն է միջակների ստորին ենթաշերտում գտնվող տնտեսությունների վիճակը: Դիմամիկ զարգացման դեպքում նրանք միտում ունեն հայտնվելու կամ չբավորների վերին, կամ միջակների միջին ենթաշերտում: Համեմատաբար հաստատուն վիճակում են գտնվում 10,87 տոկոս կազմող միջակների միջին ենթաշերտում հայտնված տնտեսությունները: Այդ խմբի քանակական փոփոխությունները պայմանավորված են այնտեղ թափանցած տնտեսությունների քանակով: Կրկին անկայուն պետք է համարել միջակների վերին ենթաշերտում հայտնված տնտեսությունների վիճակը, որոնք դիմամիկ զարգացման դեպքում կարող են կամ իջնել միջակների միջին ենթաշերտ, կամ բարձրանալ ուճև որների ստորին ենթաշերտ:

Ուճև որների խումբը համեմատաբար փոքր է՝ 11,74 տոկոս: Մյուս շերտերի նման հաստատուն պետք է համարել միջին ենթաշերտում հայտնված 3,06 տոկոս կազմող տնտեսությունների վիճակը: Անկայուն է համարվում 4,67 տոկոս կազմող ուճև որների ստորին ենթաշերտում գտնվող տնտեսությունների վիճակը: Ինչ վերաբերում է 4,01 տոկոս կազմող տնտեսություններին, ապա դրանց հավանաբար պետք է տալ այլ անուն, սահմանել այլ կարգավիճակ: Ամենայն հավանականությամբ հենց դրանց պետք է համարել կուլակային տնտեսություններ: Նրանց մասին պատկերացումներն ամբողջական կդառնան, երբ վերլուծության ենթարկվեն հետազոտված տնտեսությունների սոցիալական բովանդակությունը:

Գյուղացիության տնտեսական հզորությունը բնութագրող շեղումների  
խաբավորումը ըստ գյուղերի (տոկոսներով)

Աղյուսակ 3

Գյուղերը	Տնտեսական շեղումներ (տոկոսներով)											
	չբավորներ				միջակներ				ունաորներ			
	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին
1. Ռուսական Գյուղապարտ	4.55	1.01	4.00	14.78	32.89	17.50	12.50	00.00	00.00	00.00	00.00	00.00
2. Կուրբան	29.11	25.93	30.40	26.90	14.09	17.50	4.69	30.95	4.76	1.82	10.91	00.00
3. Ալեքսանդրովկա	00.00	0.34	00.00	1.32	4.03	30.00	20.31	00.00	00.00	00.00	00.00	00.00
4. Ֆարդան	10.00	13.13	13.60	6.07	1.35	00.00	1.56	00.00	00.00	00.00	00.00	00.00
5. Լճկաձոր	6.36	3.37	4.80	1.58	0.67	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00
6. Անոց	2.27	1.35	0.80	3.96	0.67	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00
7. Արուլի	3.64	2.02	2.40	4.75	8.05	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00
8. Շամբուլ	1.36	7.74	12.00	5.81	4.68	2.50	1.56	00.00	00.00	00.00	00.00	00.00
9. Շոճկան	15.00	15.82	11.20	12.14	4.03	5.00	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00
10. Վերին Դարապալա	00.00	00.00	00.00	0.26	5.37	7.50	4.69	7.15	1.82	14.55	27.27	00.00
11. Խուտոր Բոգդամովկա	00.00	00.00	00.00	00.00	0.67	2.50	3.13	4.76	11.90	7.15	5.45	00.00
12. Ջուզաբներ	0.90	00.00	00.00	2.91	9.40	7.50	7.81	7.15	00.00	00.00	1.82	00.00
13. Սարչապետ	21.36	24.24	20.00	14.51	7.38	2.50	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00
14. Կուսան	00.00	0.67	00.00	0.53	0.67	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00
15. Բոգդամովկա	5.45	4.04	0.80	3.69	2.02	5.00	1.56	2.38	00.00	00.00	00.00	00.00
16. Մուխ Բուլաղ	00.00	0.34	00.00	0.79	4.03	2.50	28.13	30.95	100.00	100.00	36.36	100.00
Ընդամենը	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00

Ըստ գյուղերի կատարված վերլուծության ժամանակ բացահայտվում է հետազոտված գյուղերի իրական պատկերը: Պարզվում է, որ յուրաքանչյուր գյուղ, ենթարկվելով երկրին բնորոշ օրինաչափություններին, ունի նաև իր առանձնահատկությունները: Այնհայտ է, որ տնտեսական շերտերի ձևավորման գործում նկատելի տարբերություններ կան նույնիսկ կողք կողքի գտնվող գյուղերի մեջ: Այդ գործընթացի վրա վճռական ազդեցություն կարող են ունենալ բազմաթիվ գործոններ, որոնցից են յուրաքանչյուր գյուղի աշխարհագրական դիրքը, պիտանի ու անպետք հողերի առկայությունը, ջրովի ու անջրդի հողերի համամասնությունը, հողագործական, անասնապահական կամ այլ ճյուղի զարգացմանը խթանող պայմանների առկայությունը, երկաթուղուն մոտ գտնվելը և դրանից օգտվելու հնարավորությունը, արդյունաբերական ձեռնարկություններից հեռավորությունը և վերջինիս ազդեցությունը գյուղի տնտեսական զարգացման վրա, գյուղատնտեսական ապրանքայնության աստիճանը և այլն: Դրանց մի մասի պատասխանն առկա է նախնական քարտում, մյուսները կարելի է բացահայտել տրամաբանական վերլուծությամբ: Գյուղի և գյուղացու մասին ամբողջական պատկերացում կազմելու համար կարևոր դեր կարող են ունենալ նաև մի դեպքում զաղթականների առկայությունը, մյուս դեպքում՝ զբաղմունքը, երրորդ դեպքում՝ ազգային առանձնահատկությունները և այլն: Ահա թե ինչու պետք է հետազոտությունը կատարել նաև այլ որակական-քվանտիտատիվ հատկանիշների հիման վրա:

Եթե գյուղացու հավաքական կերպարի մասին ունեցած տեղեկություններից ընդհանուր զաղափար ենք կազմում գյուղացիության տնտեսական հզորության մասին ընդհանրապես, ըստ գյուղերի վերլուծության ժամանակ բացահայտվում են տվյալ բնակավայրին բնորոշ կողմերը, ապա ըստ գյուղացիության կատեգորիաների կատարված վերլուծության ժամանակ հնարավոր է բացահայտել նրանց այլ՝ թաքնված կողմեր, ստանալ լրացուցիչ լրատվություն:

**Գյուղացիության տնտեսական հզորությունը բնութագրող շերտերի խբավորումն ըստ տնտեսությունների կատեգորիաների**

*Այլուսակ 4*

Տնտեսությունների կատեգորիաները	Տնտեսական շերտեր (տոկոսներով)								
	չբավորներ			միջակներ			ունևորներ		
	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին
բնիկ	65.45	92.26	98.40	96.04	97.99	100.00	93.74	97.62	92.73
վերաբնակիչ	5.45	2.02	0.80	3.17	1.34	00.00	3.13	00.00	00.00
եկվոր	5.00	1.01	00.00	0.53	0.67	00.00	3.13	2.38	7.27
փախստական	24.10	4.71	0.80	0.26	00.00	00.00	00.00	00.00	00.00
Ընդամենը	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00

Հստակ երևում է, որ գյուղացու հավաքական կերպարը խիստ պայմանական է, քանի որ նա հանդես է գալիս նաև բնիկի, վերաբնակչի, եկվորի, փախստականի տեսքով, իսկ նրանք միատեսակ վիճակ չեն կարող ունենալ: Թեև աղբյուրում ասհմանազատված են եկվորն ու վերաբնակիչը, սակայն նրանց կարելի է դիտարկել նույն խմբում՝ նման կարգավիճակ ունենալու պատճառով: Արդյունքում ստացվում են երեք խմբեր՝ իրենց տարբեր տնտեսական հնարավորություններով:

Ըստ տնտեսական հզորության գյուղացիական շերտերը կարելի է վերլուծության ենթարկել երկու ձևով: Մի դեպքում կարելի է բնութագրել յուրաքանչյուր շերտի ներքին նույնացվածքն ըստ տնտեսությունների կատեգորիաների (ուղղահայաց կապ), մյուս դեպքում՝ կատեգորիաների տեղաբաշխումն ըստ տնտեսական հզորություն (հորիզոնական կապ): Առաջին մոտեցման համաձայն, յուրաքանչյուր տնտեսական շերտում (ենթաշերտում) առանձնանում են գյուղացիական կատեգորիաներն իրենց տոկոսային հարաբերությամբ: Օրինաչափությունն այն է, որ բնիկները բացարձակ մեծամասնություն են կազմում բոլոր շերտերում ու ենթաշերտերում: Ամենացածր թիվը կազմել են չբավորների ստորին ենթաշերտում (65,45 տոկոս), իսկ ամենաբարձրը՝ միջակների վերին ենթաշերտում (100,00 տոկոս): Նման վիճակը պայմանավորված է ոչ միայն բնիկների մեծ թվով, այլև տնտեսական զարգացման առանձնահատկություններով:

Մյուս օրինաչափությունը վերաբերում է փախստականների: Նախկին բնակավայրում ունեզրկվելով՝ նրանք հայտնվել են չքավորների (համապատասխանաբար 24, 10:4,71:0,80 տոկոս) և միջակների ստորին ենթաշերտում (0,26 տոկոս): Մնացած ենթաշերտերում նրանց հայտնվելը բացառվել է: Հատկանշական է, որ այդ խմբի գերակշռող մասը հայտնվել է հենց չքավորների ստորին ենթաշերտում (24,10 տոկոս):

Առանձնահատուկ պետք է համարել վերաբնակիչ և եկվոր համարվող կատեգորիաների վիճակը: Այս գյուղացիներն իրենց կարգավիճակով տարբերվում են թե՛ բնիկներից, թե՛ փախստականներից: Նախկին բնակավայրում նրանց ունեցած տնտեսական հզորության մասին պատկերացում կարելի է կազմել ներկա վիճակով: Դատելով ստացված արդյունքներից՝ եկվորներն ու վերաբնակիչները համաչափորեն են տեղաբաշխվել տնտեսական բոլոր շերտերում: Կարելի է ենթադրել, որ իրենց բնակության վայրը փոխած տնտեսությունների մի մասի համար տեղափոխությունն առաջին հերթին անհաջող տնտեսական վիճակը բարելավելու միտում է ունեցել, իսկ մյուսների համար՝ արդեն բարվոք վիճակի ամրապնդում:

Ինչ վերաբերում է հորիզոնական կապերին, ապա 100 տոկոս պետք է համարել յուրաքանչյուր կատեգորիայի տնտեսությունների քանակը և պարզել նրանց զբաղեցրած տեղը յուրաքանչյուր տնտեսական շերտում: Բնիկները կազմել են հետազոտված տնտեսությունների 90,67 տոկոսը, որոնցից չքավորների շերտում հայտնվել են համապատասխանաբար 11,59:22,04:9,90 տոկոսը (բոլոր բնիկների 43,53 տոկոսը): Միջակները կազմել են 44,24 տոկոս, որոնցից ենթաշերտերում տեղաբաշխվել են համապատասխանաբար 29,28:11,74:3,22 տոկոս, իսկ ունևորները կազմել են բոլոր բնիկների 12,24 տոկոսը՝ ենթաշերտում դասավորվելով հետևյալ հերթականությամբ. 4,83:3,30:4,10 տոկոս:

Փախստականների հիմնական զանգվածը՝ 98,55 տոկոս, տեղ է գտել չքավորների ենթաշերտերում և միայն 1,45 տոկոսն է հայտնվել միջակների ստորին ենթաշերտում: Ինչ վերաբերում է բնիկներին ու եկվորներին, ապա դրանց 55,94 տոկոսը տեղ է գտել չքավորների շերտում, 28,80 տոկոսը՝ միջակների, իսկ 15,26 տոկոսը՝ ունևորների:

**Գյուղացիության տնտեսական հզորությունը բնութագրող շերտերի խմբավորումն ըստ իրավական դրության**

*Աղյուսակ 5*

Տնտեսությունների իրավական դրությունը	Տնտեսական շերտեր (տոկոսներով)								
	չքավորներ			միջակներ			ունևորներ		
	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին
ինքր (ինքնուրույն)	38.18	58.59	68.00	82.85	93.96	95.00	89.06	95.24	87.27
վարձու	42.73	20.54	8.80	4.49	1.34	2.50	3.13	00.00	00.00
ծեռնարկուական	00.00	00.00	0.80	2.37	3.36	00.00	4.69	2.38	10.91
ընկերային	0.45	10.77	15.20	6.07	0.67	00.00	1.56	00.00	00.00
ամհայտ	18.64	10.10	7.20	4.22	0.67	2.50	1.56	2.38	1.82
Ընդամենը	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00

Գյուղացիության որակական-քվանդակային կարևոր հաստկանիչների թվին է դասվում նաև գյուղացիության իրավական դրությունը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Այդ պատճառով նպատակահարմար ենք գտնում հետազոտությունը տեղափոխել այլ հարթություն, որտեղ գյուղացիական տնտեսությունները ձեռք են բերում այլ տեսք, այլ բովանդակություն: (Տե՛ս աղյուսակ 5):

Եվ այսպես, բացահայտվում է ինչպես ողջ գյուղացիության, այնպես էլ հաստատագրված գյուղացիական շերտերին բնորոշ մի կարևոր կողմ ևս: Այս դեպքում, ըստ իրավական դրության, գյուղացիական տնտեսությունները հանդես են գալիս իբրև ինքնուրույն, վարձու, ձեռնարկուական և ընկերային տիպի տնտեսություն վարողներ:

Նախ պարզենք, թե ինչ տեղ են գրավում յուրաքանչյուր խումբ հետազոտվող գյուղացիական տնտեսությունները ամբողջի մեջ: Պարզվում է, որ ինքնուրույն տնտեսություն վարողները կազմում են հետազոտվող ամբողջի 71,48 տոկոսը, վարձու տնտեսություն վարողները՝ 13,71

տոկոսը, ձեռնարկուական տնտեսություն վարողները՝ 1,82 տոկոս, ընկերային տնտեսություն վարողները՝ 5,62 տոկոս, իսկ 7,37 տոկոս տնտեսությունների իրավական դրության մասին մայրնական քարտում տեղեկություն չի արձանագրվել: Քանի որ, ըստ տնտեսական հզորության, գյուղացիության խմբերը հաստատուն են, ապա տեսնենք, թե ինչ վարքագիծ ունեն յուրաքանչյուր խմբում համապատասխանաբար իրավական դրություն ունեցող տնտեսությունները:

Զբավորների ենթաշերտերում, ըստ իրավական դրության, տեղ են գտել ինքնուրույն, վարձու, ընկերային և չբացահայտված տնտեսությունների խմբերը: Այստեղ առանձնահատկությունն այն է, որ չբավորների խմբում չեն հայտնվել ձեռնարկուական տիպի տնտեսություն վարողները: Դա տրամաբանական է, քանի որ ձեռներեցությամբ զբաղվող տնտեսությունները, որպես կանոն, պատկանում են միջակ և ունևոր տնտեսությունների խմբերին: Ինքնուրույն տնտեսություն վարողները, կազմելով հետազոտվող տնտեսությունների մեծ մասը, համաչափորեն են տեղաբաշխվել տարբեր տնտեսական հզորություն ունեցող շերտերում: Նրանք չբավորների ստորին ենթաշերտում կազմել են 38,18 տոկոս, միջին ենթաշերտում՝ 58,59 տոկոս, վերին ենթաշերտում՝ 68,00 տոկոս: Նրանք մեծ տեսակարար կշիռ ունեն միջակների (համապատասխանաբար 82,85:93,96:95,00 տոկոս) և ունևորների (համապատասխանաբար 89,06:95,24:87,27 տոկոս) մեջ:

Օրինաչափ է վարձու տնտեսություն վարողների պահը: Նրանց հիմնական զանգվածը տեղ է զբաղեցրել չբավորների (համապատասխանաբար 42,73:20,54:8,80 տոկոս) և միջակների (համապատասխանաբար 4,49:1,34:2,50 տոկոս) ենթաշերտերում: Հատկանշական է, որ ինչքան հզոր է տնտեսությունը, այնքան փոքր է վարձու տնտեսություններ վարողների զանգվածն այդ խմբում և հակառակը:

Ձեռներեցությամբ զբաղվող տնտեսությունների վիճակն այլ է: Զբավորների ենթաշերտերում ձեռնարկուական տնտեսություն վարողները բացակայում են: Նրանց ներկայությունը խմբերում ուղիղ համեմատական է տնտեսությունների տնտեսական հզորության աճին: Ինչքան հզոր են տնտեսությունները, այնքան մեծաքանակ է ձեռնարկուական տնտեսությունների ներկայությունն այդ խմբերում: Ընդ որում, աճը կատարվում է համաչափորեն: Միջակների ստորին ենթաշերտում ձեռնարկուական տիպի տնտեսությունների թիվը կազմել է 2,37 տոկոս, միջին ենթաշերտում՝ 3,36 տոկոս, իսկ ունևորների ենթաշերտում՝ 17,98 տոկոս, որը նկատելիորեն գերազանցում է չբավոր և միջակ տնտեսությունների թիվը:

Ընկերային տիպի տնտեսություն վարողները (պարզ կոոպերացիա, կոլտնտեսություններ, սովխոզներ) 1920-ական թթ. սկզբին (ճակ. հետագա տարիներին) առաջին հերթին տնտեսապես թույլ էին: Այդ են վկայում ճակ. նրանց տեղաբաշխումը տարբեր տնտեսական հզորություն ունեցող շերտերում և ենթաշերտերում: Նրանց ներկայությունն ունևորների ստորին ենթաշերտում կազմել է ունևոր տնտեսությունների ընդամենը 1,56 տոկոսն այն դեպքում, երբ ունևորների միջին և վերին ենթաշերտերում այդպիսիները բացակայել են: Նրանց մեծ մասը հիմնականում կենտրոնացել է չբավորների (համապատասխանաբար 0,45:10,77:15,20 տոկոս), մասամբ ճակ. միջակների (համապատասխանաբար 6,07:0,67:00,00 տոկոս) ենթաշերտերում:

Նախնական քարտում տեղ գտած բացթողումների պատճառով տնտեսությունների զգալի մասի իրական դրությունն անհայտ է մնացել: Դատելով նրանց զբաղեցրած տեղերից, որոնց հիմնական զանգվածը տեղ է գտել չբավորների (համապատասխանաբար 18,64:10,10:7,20 տոկոս) և միջակների (համապատասխանաբար 4,22:0,67:2,50 տոկոս) ենթաշերտերում, կարելի է ենթադրել, որ դրանք հազիվ թե դասվեին ձեռնարկուական տնտեսությունների թվին: Հավանաբար նրանք պատկանել են վերոհիշյալ այլ իրավական դրություն ունեցող տնտեսությունների խմբին:

Տնտեսություններն ըստ որակական-քովանդակային հատկանիշների վերլուծության ժամանակ կարևոր տեղ ու դեր պետք է հատկացնել ազգային կազմին: Այս կարևոր գործոնն անտեսել հնարավոր չէ, քանի որ այն պայմանավորված է դարավոր ավանդություններով, սովորություններով, տնտեսություն վարելու եղանակով, կոնկրետ ազգի զարգացման մակարդակով և այլն: (Տե՛ս աղյուսակ 6):

Հետազոտվող տնտեսությունների ամբողջի մեջ հայտնվել են Հայաստանում ապրող վեց ազգեր: Դրանք են՝ բնիկ հայերը և ազգային փոքրամասնություն կազմող ռուսները, իուլները, թաթարները, սաորիները և եզդիները: Վերջին երկուսը փոքր թիվ կազմելու պատճառով միավորված հանդես են եկել «այլ» արտահայտության տակ: Եթե վերջին երկուսը հետազոտվող

ամբողջի մեջ փոքր թիվ կազմելու պատճառով արժանի չէին ուշադրության, ապա առաջին չորս ազգերի առումով գյուղացիության տնտեսական շերտերը նորովի են ներկայանում:

**Գյուղացիության տնտեսական հզորությունը բնութագրող  
շերտերի խմբավորումն ըստ ազգային կազմի**

*Աղյուսակ 6*

Տնտեսությունների ազգային կազմը	Տնտեսական շերտերը (տոկոսներով)								
	չբավորներ			միջակներ			ուճառներ		
	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին
հայեր	81.82	79.80	71.20	70.71	37.58	30.00	15.63	14.28	9.09
ռուսներ	5.00	1.68	4.00	16.36	38.26	50.00	37.50	38.10	34.55
իուլներ	10.91	17.51	23.20	8.18	2.68	00.00	1.56	00.00	00.00
քաթարներ	1.82	0.34	1.60	4.49	21.48	20.00	45.31	47.62	56.36
այլ	0.45	0.67	00.00	0.26	00.00	00.00	00.00	00.00	00.00
Ընդամենը	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00

Առաջին հայացքից կարող էր թվալ, թե բնիկ հայերը կարող էին առաջատար դիրք գրավել տնտեսապես հզոր գյուղացիական շերտերում: Իրականում հայերը մեծ տոկոս են կազմել հենց չբավորների ենթաշերտերում (համապատասխանաբար 82,82:79,80:71:20 տոկոս): Դա պայմանավորված է երկու գործոններով: Առաջինը մեծաթիվ լինելն էր: Սակայն դա թեև կարևոր, բայց ոչ վճռորոշ պայման է, քանի որ յուրաքանչյուր ազգի տեղաբաշխումն ըստ շերտերի հաստատում է երկրորդ գործոնի կարևորությունը: Երկրորդ գործոնը պայմանավորված էր դարերի ընթացքում ձևավորված իրողության հետ, երբ Հայաստանը գրաված տիրող ժողովուրդները լավագույն ու շատ հողերը զավթել են տեղաբնակներից ու հայտնվել տնտեսապես հզոր գյուղացիության խմբերում: Ինչքան բարձր է գյուղացիության տնտեսական հզորության աստիճանը, այնքան պակաս է հայերի մասնակցությունը այդ ենթաշերտերին: Այսպես, եթե միջակների ենթաշերտերում հայերը կազմել են բոլոր միջակների համապատասխանաբար 70,71:37,58:30,00 տոկոսը, ապա ուճառների խմբում նրանք կազմել են համապատասխանաբար 15,63:14,28:9,09 տոկոս: Տնտեսությունների նման տեղաբաշխումը վկայում է նրանց շերտավորման համաչափության մասին, ինչը մոտավորապես համընկնում է ողջ երկրում տիրող շերտավորման աստիճանի հետ:

Ինքնատիպ վիճակ է ստեղծվել իուլների համար: Որպես ազգային փոքրամասնություն նրանց վիճակը նկատելիորեն զիջում էր ռուսների և թաթարների վիճակին: Վերջին դարերի ընթացքում չդասվելով տիրող ազգերի թվին՝ իուլները չեն փայլել տնտեսական արտոնություններով և մեծ մասամբ հայտնվել են չբավորների խմբում: Այստեղ նրանց մասնակցությունը դրսևորվել է համապատասխանաբար 10,91:17,51:23,20 տոկոսի սահմաններում, ինչը մեծ տոկոս է կազմում հետազոտված իուլների համար: Հատկանշական է, որ նրանց մասնակցությունը վերին շերտերին փոքրանում է հասնելով զրոյի: Այսպես, եթե միջակների խմբում նրանք կազմել են համապատասխանաբար 8,18:2,68:00,00 տոկոս, ապա ուճառների խմբում ներկա են միայն ստորին ենթաշերտերում (1,56 տոկոս): Երկրորդ գործոնը պայմանավորված էր նրանց զբաղմունքով: Բանն այն է, որ իուլների զգալի մասը ներգրավված էր տարածքի լեռնարդյունաբերական ձեռնարկություններում, և նրանց եկամուտները ձևավորվում էին հենց այդ բնագավառից:

Առանձնահատուկ վիճակ է ստեղծվել նաև թաթարների և ռուսների համար: Համարվելով վաղ և ոչ վաղ շրջանի տիրապետող ազգերի ներկայացուցիչ՝ նրանք օգտվում էին նախկինում ձեռք բերած նկատելի արտոնյալ վիճակից, ինչը պահպանվում էր նաև խորհրդային իշխանության առաջին տարիներին: Ռուսները չբավորների խմբում փոքր թիվ էին կազմում (համապատասխանաբար 5,00:1,68:4,00 տոկոս): Հակառակ դրան՝ նրանց թիվը մեծանում է միջակների (համապատասխանաբար 16,36:38,26:50,00 տոկոս) և ուճառների խմբերում (համապատասխանաբար 37,50:38,10:34,55 տոկոս):

Համեմատաբար ավելի բարվոք է թաթարների վիճակը: Այստեղ չբավորների թիվն ավելի քիչ է (համապատասխանաբար 1,82:0,34:1,60 տոկոս), նկատելիորեն մեծանում է միջակների քանակը (համապատասխանաբար 4,49:21,48:20,00 տոկոս), և ավելի մեծանում



ունևորների քանակը (համապատասխանաբար 45,31:47,62:56,36 տոկոս):

Յետազոտված գյուղացիական տնտեսությունների ամբողջի համար իբրև որակական-բովանդակային հատկանիշ կարևոր նշանակություն ունի նաև գլխավոր զբաղմունքը: Մի քանի տասնյակի հասնող զբաղմունքի տեսակները խմբավորելով 9 խմբերում (այն նպատակահարմար է նաև հետազոտական առումով), հնարավոր է դառնում բացահայտել, թե ըստ գլխավոր զբաղմունքի որ խումբն ինչ տեղ է գրավում գյուղացիության տնտեսական հզորությունը բնութագրող շերտերում և ենթաշերտերում: Առանց լուրջ հետազոտություն կատարելու երբեմն այն թյուր հետևության կարելի է համզել, թե որոշակի զբաղմունք ունեցողներն անհնար է, որ հայտնվեն տնտեսապես հզոր (կամ թույլ) շերտերում, այսինքն նրանց տեղը շերտերում կանխատեսելի է: Այնինչ համակարգային հետազոտության դեպքում հաշվի են առնվում ոչ միայն տնտեսության, եկամտաբեր շյուղերը, այլև դրանց հիման վրա վերականգնվում է բյուջեն, նկատի է առնվում ընտանիքի անդամների գործունեության ոլորտը և հանգամանքները: (Աղյուսակ 7):

Յողագործական զբաղմունք ունեցող տնտեսությունները համարվում են հետազոտված տնտեսությունների ամենամեծ խումբը: Յետևաբար նրանք մեծ խումբ են կազմում նաև տնտեսական հզորություն ունեցող բոլոր շերտերում: Զբավորների ստորին ենթաշերտերում նրանք կազմել են 48,64 տոկոս՝ առաջ անցնելով նույնիսկ բանվորական զբաղմունք ունեցող տնտեսությունների շերտից (30,91 տոկոս): Զբավորների միջին և վերին ենթաշերտերում նրանք ավելի մեծ տոկոս են կազմում (համապատասխանաբար 79,80 և 89,60 տոկոս):

Յողագործական զբաղմունք ունեցող տնտեսությունների բարձր տեսակարար կշիռը պահպանվում է նաև միջակների ենթաշերտերում: Այստեղ նկատվում է հետևյալ օրինաչափությունը: Միջակների ստորին ենթաշերտից դեպի վերինը հետազոտելիս նկատում ենք, որ պակասում են այլ զբաղմունք ունեցող տնտեսությունները ենթաշերտերում: Այսպես, եթե միջակների ստորին ենթաշերտերում բացակայում են երկու զբաղմունք ունեցող տնտեսություններ (մտավորականներ և սպասարկման ոլորտի աշխատողներ), ապա միջին ենթաշերտում՝ յոթ (արհեստավորներ, ծառայողներ, արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական երկրորդական՝ զբաղմունք ունեցողներ, հոգևորականներ, մտավորականներ, սպասարկման ոլորտի աշխատողներ, անհայտ), իսկ վերջին ենթաշերտում ութ (ավելանում է բանվորների խումբը): Միջակների ենթաշերտերում հողագործական զբաղմունք ունեցողները կազմել են համապատասխանաբար 95,25:89,93:87,50 տոկոս:

**Գյուղացիության տնտեսական հզորությունը բնութագրող շերտերի խմբավորումն ըստ գլխավոր զբաղմունքի**

*Աղյուսակ 7*

Տնտեսական շերտեր (տոկոսներով)	Տնտեսական շերտեր (տոկոսներով)								
	չբավորներ			միջակներ			ունևորներ		
	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին
հողագործ	48.64	79.80	89.60	95.25	89.93	87.50	62.50	57.14	47.28
արհեստավոր	3.18	0.67	00.00	0.26	00.00	00.00	1.56	2.38	00.00
ծառայող	4.54	1.01	0.80	0.53	00.00	00.00	00.00	00.00	00.00
բանվոր	30.91	15.15	4.00	1.59	0.67	00.00	1.56	00.00	00.00
անաստապահ	0.91	0.67	0.80	0.79	9.40	12.50	34.38	40.48	47.28
արդյունաբերական բնույթի գյուղատնտ. երկրորդական զբաղմունք	2.73	0.34	00.00	0.26	00.00	00.00	00.00	00.00	3.63
հոգևորական	0.91	00.00	00.00	0.53	00.00	00.00	00.00	00.00	00.00
մտավորական	0.91	0.34	1.60	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00
սպասարկման ոլորտ	1.82	00.00	0.80	00.00	00.00	00.00	00.00	00.00	00.00
անհայտ	5.45	2.02	2.40	0.79	00.00	00.00	00.00	00.00	1.81
Ընդամենը	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00

Տնտեսական հզորություն ունեցող վերին ենթաշերտերում հողագործական զբաղմունք ունեցող տնտեսությունների տեսակարար կշիռն աստիճանաբար նվազում է, սակայն շա-

րունակում է գերազանցել այլ զբաղմունք ունեցող բոլոր խմբերին: Ունևորների ստորին ենթաշերտում (62,50 տոկոս) այլ զբաղմունք ունեցող տնտեսությունների թիվը նվազելով հասնում է չորսի (հողագործներ, արհեստավորներ, բանվորներ, անասնապահներ), իսկ միջին և վերին ենթաշերտերում միայն երեք կարգի զբաղմունք ունեցող տնտեսություններ են հայտնվել (հողագործներ, անասնապահներ, արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական երկրորդական զբաղմունք ունեցողներ, չհաշված անհայտները):

Անասնապահական զբաղմունք ունեցողները հայտնվել են բոլոր շերտերում ու ենթաշերտերում: Հողագործական զբաղմունք ունեցողների համեմատ, նրանց վիճակն առանձնահատուկ է: Եթե առաջինները և մեծաթիվ են և համաչափ են տեղաբաշխված շերտերում, ապա անասնապահական զբաղմունք ունեցողները վերընթաց տեսք ունեն, որտեղ միջակները գերազանցում են չբավորներից, ունևորները՝ միջակներից: Անասնապահական զբաղմունք ունեցողները փոքր տեսակարար կշիռ ունեն և իրենց խմբում, և նույնիսկ այլ զբաղմունք ունեցող տնտեսությունների խմբում: Բոլոր չբավորների մեջ անասնապահները ստորին ենթաշերտում կազմում են 0,91, միջին ենթաշերտում՝ 0,67 և վերին ենթաշերտում՝ 0,80 տոկոս:

Միջակների ենթաշերտերում նրանց տեսակարար կշիռը մեծանում է՝ ինչպես բոլոր միջակների, այնպես էլ իրենց խմբի համեմատ: Հատկանշական է, որ քանակական վերընթացը շարունակվում է ենթաշերտերում (ստորին ենթաշերտում 0,79, միջինում՝ 9,40, վերինում՝ 12,50 տոկոս): Անհամեմատ փոքր տոկոս է կազմում միջակների ստորին ենթաշերտը:

Անասնապահական զբաղմունք ունեցող տնտեսությունների զգալի մասը տեղ են գրադեցրել ունևորների ենթաշերտերում (համապատասխանաբար 34,38:40,48:47,28 տոկոս): Համակարգային վերլուծության դեպքում պարզվում է, որ անասնապահական զբաղմունք ունեցողները հաստատուն տեղ են գրավել միջակների և ունևորների ենթաշերտերում:

Ի տարբերություն հողագործական և անասնապահական զբաղմունք ունեցող տնտեսությունների, արհեստավորների խումբն անհամաչափ է տեղաբաշխվել տնտեսական շերտերում: Նրանք բաժանվել են երկու խմբի, որոնցից մի մասը հաստատուն տեղ է գրավել չբավորների ստորին (3,18 տոկոս) և միջին (0,67 տոկոս) ենթաշերտերում և միջակների ստորին ենթաշերտում (0,26 տոկոս): Վերջինս իր տնտեսական վիճակով շատ մոտ է չբավորների վերին ենթաշերտում գտնվող տնտեսություններին: Մյուս խումբը տեղ է գտել ունևորների ստորին (1,56 տոկոս) և միջին (2,38 տոկոս) ենթաշերտերում: Նշանակում է, որ տնտեսությունների այդ խումբը կամ ունենալով մի զբաղմունք (որևէ արհեստ), հայտնվել է չբավորների ենթաշերտում կամ, դրան զուգահեռ, ունեցել է նաև այլ զբաղմունք և բյուջեի մեծացման պատճառով հայտնվել ունևորների շերտում: Հատկանշական է, որ նրանք որոշակի տեղ չեն գրադեցրել միջակների շերտում:

Գյուղացիական տնտեսությունների մեջ որոշակի տեղ են գրադեցրել ծառայողները: Դատելով ստացված արդյունքներից, նրանք հաստատուն տեղ են գրավել չբավորների ենթաշերտերում (համապատասխանաբար 4,54:1,01:0:80 տոկոս) և միջակների ստորին (0,53 տոկոս) ենթաշերտում: Այս տվյալները ճիշտ ու տիպական են հետազոտության ենթակա ցուցանիշների համար: Բայց քանի որ նրանց բյուջեն ձևավորվել է ոչ միայն նշված ցուցանիշներից, այլ ծառայողական գործունեությունից, ինչը հաստատագրված չէ նախնական քարտում, այդ պատճառով նրանք հաստատուն տեղ են գրավել չբավորների, այլ ոչ թե միջակների և ունևորների շերտերում:

Ինքնատիպ վիճակ է արձանագրվել բանվորական զբաղմունք ունեցող տնտեսությունների համար: Ի տարբերություն անասնապահական զբաղմունք ունեցողների, որտեղ տնտեսությունները շերտերում դասավորվել են վերընթաց գծով, բանվորական զբաղմունք ունեցող տնտեսությունների հիմնական զանգվածը տեղաբաշխվել է չբավորների ենթաշերտերում (համապատասխանաբար 30,91:15,15:4,00 տոկոս): Նման դասավորությունը տրամաբանական է այդ զբաղմունքն ունեցող տնտեսությունների համար: Անտրամաբանականը նրանց մի մասի հայտնվելն է միջակների ստորին (1,59 տոկոս) և միջին (0,67 տոկոս), ինչպես նաև ունևորների ստորին (1,56 տոկոս) ենթաշերտերում: Սակայն, նույնիսկ նման տեղաբաշխումը հիմնավորված է և կախված այլ գործոններից: Գործոններից մեկը պայմանավորված է ընտանիքի բազմանդամության և անդամների բազմաբնույթ զբաղմունքի հետ: Այն հնարավորություն է տալիս նպաստել բյուջեի մեծացմանը: Պակաս դեր չի խաղում նաև

բազմանդամ ընտանիքներում առկա աշխատուժի գործոնը, որը նույնպես լրացուցիչ եկամուտ կարող էր բերել ընտանիքի բյուջեին: Հատկանշական է նաև, որ նրանք ոչ մի կերպ չեն կարողացել հաստատվել ունևորների միջին և վերին ենթաշերտերում:

Ի տարբերություն այլ զբաղմունք ունեցող խմբերի, արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական երկրորդական զբաղմունք ունեցող տնտեսությունները ոչ միայն համաչափ չեն տեղաբաշխվել, ոչ միայն մեկ տնտեսական շերտում (ունևորների) չեն հայտնվել, ինչը տրամաբանական էր քվում ըստ նրանց զբաղմունքի, այլ բաժանվելով երկու խմբի հայտնվել են հակադիր բևեռներում: Նրանց մի մասը չբավորների ստորին (2,73 տոկոս), միջին (0,34 տոկոս) և միջակների ստորին (0,26 տոկոս) ենթաշերտերում են, իսկ մնացած մասը հաստատուն տեղ է գրավել ունևորների միայն վերին (3,63 տոկոս) ենթաշերտում:

Գյուղական հոգևորականությունը, ըստ հետազոտված եական ցուցանիշների (չհաշված եկամտի այլ աղբյուրները), հայտնվել է չբավորների ստորին (0,91 տոկոս) և միջակների ստորին (0,53 տոկոս) ենթաշերտերում: Ակնհայտ է, որ նրանց գործունեության և եկամտաբերության այլ բնագավառներ, արտացոլված չլինելով նախնական քարտում, չեն հետազոտվել ու արտացոլվել նրանց բյուջեում:

Ինչ վերաբերում է սպասարկման ոլորտի աշխատողներին, ապա նրանք, ըստ ստացված արդյունքների և տրամաբանության, զբաղեցրել են չբավորների ենթաշերտերը:

Վերջապես, գյուղացիական տնտեսությունների բնութագրումն ըստ տնտեսական հզորության ավարտուն տեսքի բերելու համար մնում է բացահայտել ևս մի կողմ: Այն ըստ հողատիրության ձևի տնտեսությունների խմբավորումն է: Նման մոտեցումը կարևոր նշանակություն է ձեռք բերում, քանի որ 1922 թ. ելակետային է համարվել կոլեկտիվացման կուրսին անցնելու համար, երբ նոր էր ձևավորվում առաջին համայնական միավորները: (Տե՛ս աղյուսակ 8):

Այս վերլուծությունից պարզվում է, որ գյուղացիության բացարձակ մեծամասնությունը դեռ վարում էր մասնավոր տնտեսություն (մենատնտես), և շատ փոքր մասն էր անցել համայնական հողատիրության (2,04 տոկոս): Աղբյուրի միջոցով անհնար է եղել պարզել 7,81 տոկոս կազմող տնտեսությունների հողատիրության ձևը: Նրանք ոչ մենատնտես են արձանագրվել, ոչ էլ՝ համայնավար:

### Գյուղացիության տնտեսական հզորությունը բնութագրող շերտերի խմբավորումն ըստ հողատիրության ձևերի

Աղյուսակ 8

Հողատիրության ձևերը	Տնտեսական շերտերը (տոկոսներով)								
	չբավորներ			միջակներ			ունևորներ		
	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին	ստորին	միջին	վերին
տնովի (մասնավոր հողատեր)	62.73	91.92	98.40	92.25	97.99	95.00	96.88	97.62	98.18
համայնական	0.45	1.68	0.80	3.43	2.01	5.00	1.56	2.38	1.82
անհայտ	36.82	6.40	0.80	1.32	00.00	00.00	1.56	00.00	00.00
Ընդամենը	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00

Մյուս առանձնահատկությունն այն է, որ մենատնտես գյուղացիները համաչափորեն են տեղաբաշխվել բոլոր շերտերում ու ենթաշերտերում: Եվ վերջապես, համայնական հողատիրությամբ զբաղվողները թեև տեղ են գտել բոլոր շերտերում ու ենթաշերտերում, սակայն բոլոր համայնականների 89,3 տոկոսը հայտնվել է չբավորների ու միջակների շերտերում, և միայն 10,7 տոկոսն է համարվել ունևոր: Ամենայն հավանականությամբ համայնական տնտեսություն էին վարում տնտեսական թույլ հզորություն ունեցողները և քաղաքական նպատակ հետապնդողները:

Այսպիսով, համակարգային մեթոդի և որակական-քվանտիտատիվ վերլուծության միջոցով բացահայտվեց գյուղացիության տնտեսական հզորությունը, որը հիմք կարող է դառնալ դրանց սոցիալ-դասակարգային բովանդակությունը պարզելու համար:

**А. Х. ВАРДАНЯН - Внутренняя структура крестьянства Армении в соответствии с экономическим потенциалом (1922 г.).** - Для освещения проблем социально-классовой структуры крестьянства Армении прежде всего определяется экономический потенциал крестьянских хозяйств, затем - социальное содержание каждого экономического слоя. При определении экономического потенциала применяется метод системного анализа, определяются показатели оценки, пересматриваются старые критерии. Создана модель равноценности с базовым выражением, восстановлен бюджет хозяйств в денежном выражении.

Исследования выполнены по крестьянству в целом по качественно-содержательным признакам (местожительство, категория, правовое положение; национальный состав, главное занятие, форма земледелия). Согласно автору, подобный подход позволяет обобщить наши представления о каждой прослойке крестьянства в частности и об армянском крестьянстве в целом.